



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«13» 12. 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 278 - 24

Նախաձեռնող՝

«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային
հիմնահարցերի և հիդրոլոգիայի ինստիտուտ» ՓԲԸ
ք.. Երևան Արմենակյան 125/3

Գործունեությունը՝

Արթիկ համայնքի Արթիկի ջրամբարի վերակառուցում
Շիրակի մարզ

Առդիր՝ 9 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 278 - 24

«13» *դեկտեմբեր* 2024թ.

Շիրակի մարզի Արթիկի ջրամբարի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝ «Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ»
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ՇՄԱԳ հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝ «Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝ Շիրակի մարզ Արթիկ համայնք Նոր Կյանք, Վարդաքար, Փանիկ, Մեղրաշեն և Անուշավան բնակավայրեր

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզ Արթիկ համայնքի Նոր Կյանք բնակավայրի վարչական տարածքում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 3)-րդ կետի «ա» ենթակետի և 18-րդ հոդվածի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության է ենթակա նաև նախատեսվող գործունեության տեսակների վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում կամ քանդում կամ նախագծային փոփոխությունը:

Նախագծով նախատեսվում է Արթիկի պատվարի և ջրամբարի վերակառուցում, որի հիմնական նպատակն է նպաստել Արթիկջուր գետի երկայնքով սակավ ջրային ռեսուրսների կայուն օգտագործմանը՝ հաշվի առնելով տարբեր մրցակցող ջրօգտագործողների շահերը: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել գյուղատնտեսական արտադրողականությունը, նպաստել պարենային անվտանգության ապահովմանը, խթանել գյուղական զարգացումը և բնակչության կենսապայմանների բարելավումը, ինչպես նաև նվազեցնել թիրախային խմբի խոցելիությունը կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ, պաշտպանել տարածաշրջանում էկոհամակարգերն ու կենսաբազմազանությունը, ինչպես նաև նվազեցնել ռիսկը անավարտ Արթիկի պատվարի և ջրամբարից ներքև գտնվող բնակչության համար: Ծրագիրը միտված է Շիրակի մարզի Կարկաչուն գետի ոռոգման համակարգի բնակչությանն ու արդիականացմանը: Ծրագիրն ընդգրկվելու է ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման



շրջանակում՝ Արթիկջուր գետի ավազանում և ջրօգտագործող խմբերի համար ջրային ռեսուրսների ավելի կայուն կառավարում ապահովելու համար: Արթիկի ջրամբարն ունենալու է 1.2 մլն.մ³ պահեստավորման հզորություն,

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել նախագծային փաստաթղթերը՝

- նախկին ջրամբարի տարածքը ընդգրկող տեղամասի ինժեներատեխնիկական հետազոտությունների եզրակացությունը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 128ա/24 տրված 30.08.2024թ., հողամասի նպատակային և գործառնական նշանակությունն է՝ հիդրոտեխնիկական կառույցների հողեր:

Նկարագրական մաս. Արթիկի ջրամբարը գտնվում է Շիրակի մարզի Արթիկի տարածաշրջանում՝ Կարկաչուն գետի ջրավազանում, Արթիկ քաղաքից հյուսիս-արևմուտք, Արթիկջուր գետի վրա: Արթիկի տարածաշրջանն ունի բազմաճյուղ ճանապարհային ցանց, տարածքով է անցնում Երևան-Գյումրի ավտոմայրուղին և երկաթուղին: Արթիկի ջրամբարը շահագործման է հանձնվել 1992 թվականին՝ տարածքի 5 համայնքներին պատկանող 300 հա գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգելու նպատակով: Արթիկի ջրամբարի պատվարի փլուզման հետ կապված պարզաբանվել են Արթիկջուր գետի բոլոր մորֆոմետրիկ տվյալները, ինչպես նաև Կարկաչուն գետի ձախափնյա երկու ձորակների տվյալները, որոնցից նախատեսվում է ջրի տեղափոխումը ջրամբարում կուտակման համար: Ելնելով վերը նշված ճշգրտումներից, իրականացվել են բոլոր հիդրոլոգիական բնութագրերի վերահաշվարկներ:

Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծում որպես հեղեղային առավելագույն ելք ընդունվել է 0.1% ապահովածության՝ 23.4 մ3/վ: Իրիգացիոն ջրթողի թողունակությունը նեոարյալ բնապահպանական թողքերը ընդունվում է 320/վրկ: Մեռյալ ծավալը համաձայն ջրաբերուկների հոսքի մեծության 100 տարվա համար կազմում է 0.13 մլն մ³:

Հիդրոլոգիական հաշվարկներում ուսումնասիրվել են Արթիկի ջրամբարի կառուցումից հետո նրա ազդեցությունը Վարդաքարի ջրամբարի վրա: Իրականացվել է ջրային հաշվեկշիռ Վարդաքարի ջրամբարի ուղղահատավածքում: Համաձայն հաշվարկների Վարդաքարի ջրամբարի ուղղահատավածքում ջրի տարեկան հոսքը կազմում է 28.78 մլն.մ³, որի հոսքը ամբողջությամբ բավարարում է Վարդաքարի ջրամբարի շահագործման պայմաններին: Արթիկի ջրամբարի կառուցումը բացասական ազդեցություն չի թողնելու Վարդաքարի ջրամբարի վրա:

Կատարվել է ջրի ելքերի վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումը, համաձայն որի վերջին 20 տարիների ընթացքում ջրի ծախսը կտրուկ նվազել է՝ 1998-2011թթ. 28.5% -ով, 2012-2022թթ.՝ 30% -ով: Գեոդեզիական հետազննական աշխատանքները իրականացվել են Արթիկի ջրամբարի թասի, պատվարային հանգույցի, հանքատեղիների, մոտեցնող (դոտացիոն) և ոռոգման ջրանցքների տարածքներում:

Արթիկի ջրամբարի ծավալի ապահովման համար հարկավոր է Պեմզաշեն բնակավայրով անցնող երկու ձորակներով եկող ջրերն ուղղել դեպի ջրամբար: Այդ իրականացնելու համար ուսումնասիրվել է տեղանքը և ընտրվել է օպտիմալ մոտեցնող ջրանցքի առանցքը: Գլխամասից մինչև Արթիկջուր գետը ջրանցքի երկարությունը կկազմի մոտ 5600մ: Մոտեցնող ջրանցքից հետո Արթիկջուր գետով ջրը կտեղափոխվի մինչև ջրամբար մոտ



2400մ: Արթիկի ջրամբարն օգտագործվելու է Նոր Կյանք, Վարդաքար, Փանիկ, Մեղրաշեն և Անուշավան բնակավայրերին պատկանող 300 հա գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգելու նպատակով: Այդ իրականացնելու համար պետք է կառուցվի մոտ 7.0 կմ ոռոգման ջրանցք, որն անցնելու է Նոր Կյանք, Փանիկ, Մեղրաշեն և Անուշավան բնակավայրերի տարածքով: Ջրատնտեսական հիմնվորումները ջրամբարի ծավալի որոշման համար իրականացվել են ելնելով Արթիկջուր գետի և Կարկաչուն գետի ձախափնյա հեղեղատարներից ջրամբար մուտք գործող ամսական 50% և 75% ապահովածության հոսքերի մեծություններից, 300 հա ամսական ոռոգման ջրապահանջարկի, ջրամբարից կորուստների (գոլորշիացում և ֆիլտրացիա), բնապահպանական ամսական թողքերի չափերից:

300 հա ոռոգման ջրապահանջարկի 50% ապահովածության համար հարկավոր է կառուցել ջրամբար՝ 1.112 մլն մ³ օգտակար ծավալով: 75% ապահովածությամբ ջրամբարի կառուցման դեպքում հնարավոր չի ապահովվել 300 հա ոռոգման ջրապահանջարկը:

Արթիկի ջրամբարը բաղկացած է լինելու՝

պատվարային հանգույցից՝

ա. Հողային պատվար,

բ. Գոյություն ունեցող շինարարական ելքերի հեռացման ջրանցք,

գ. Ոռոգման ջրթող,

դ. Ջրընդունիչ ջրանցք,

ե. Հեղեղային ջրհեռ,

ջրամբարի թասից՝

ա. Պահակային-շահագործման տնակից,

բ. Մոտեցնող ջրանցքից,

գ. Ոռոգման ջրանցքից:

դ. Պատվարային հանգույց՝

հողային պատվարից՝

Պատվարի մարմինը նախատեսվում է իրականացնել տեղական շինարարական նյութերով՝ ճալաքարա-կոպճային գրունտներով, որպես հակաֆիլտրացիոն միջոցառում նախատեսվում է իրականացնել ավազակավե էկրանի և պանուրի կառուցում:

- Պատվարի առավելագույն բարձրությունը՝ 10.0 մ է նախատեսվում,
- Կատարի երկարությունը՝ 610 մ,
- Կատարի լայնությունը՝ 6 մ,
- Շեպերի թեքությունները՝ վերին բիեֆում - 1:3.5; 1:4.0; ներքին բիեֆում - 1:2.5,
- Կատարի նիշը՝ 1670.0 մ:

Վերին շեպը նախատեսվում է ամրացնել քարե շարվածքով: Պատվարի հակադարձ ֆիլտրը նախատեսվում է իրականացնել $m=3.0$ թեքությամբ, էկրանը՝ $m=3.0$, իսկ անցումային շերտը ճալաքարա-կոպճային գրունտներից՝ $m=2.0$: Պատվարի ներքին բիեֆում նախատեսվում է քարային ցամաքորո: Պատվարի կատարի վերին և ներքին շեպերի եզրերում նախատեսվում է բեռոնե եզրաքար: Պատվարի վերին շեպի ամբողջ



սահմանագծով նախատեսվում են՝ լուսավորության սյուներ 26մ քայլով, մետաղական բազրիք, մայթ 60սմ լայնությամբ և կատարից բարձր 20սմ-ով ասֆալտե ծածկույթով:

Պատվարի կատարում ամբողջ լայնքով (ներառյալ մայթը 0.60մ լայնքով) նախատեսվում է ասֆալտե ծածկույթ 8սմ, որից 5սմ-ը՝ խոշորահատիկ, իսկ 3սմ-ը մանրահատիկ շերտով: Պատվարի կատարն ունի թեքություն $i=0.015$ դեպի վերին շեղը: Յուրաքանչյուր 26.0 մետրը մեկ նախատեսվում է մետաղական $D=102 \times 4$ մ խողովակներ $L=2.5$ մ երկարությամբ, անձրևաջրերը հեռացնելու համար: Միաժամանակ նախատեսվում է կատարի երկարությամբ մետաղական $D=325 \times 6$ մ կիսախողովակաշար անձրևաջրերի հավաքման հեռացման համար: Շինարարության ժամանակ գետի ելքերը հեռացնելու նպատակով օգտագործվելու հին ջրամբարի համար կառուցած $\Gamma-20$ տիպի ե/բ բլոկներով և ե/բ հատակով ջրանցքը: Ջրանցքը գտնվում է բարվոք վիճակում և այն շահագործման վիճակի բերելու համար նախատեսվում է իրականացնել՝

- ջրամբարի հատակի մաքրում բուսականությունից և բերվածքներից, հատակի խոռոչների լցափակում,
- մոտ 60մ հատվածի քանդված բլոկների փոխարինում նոր բլոկներով,
- $\Gamma-20$ տիպի հողմահարված բլոկների սվաղում:

Ոռոգման ջրթողը բաղկացած է լինելու՝

1. ջրընդունիչ աշտարակից՝ 3.3մ բարձրությամբ և 2.9x4.4մ արտաքին չափերով,
2. ե/բ միաձուլ ջրթողից՝ 300մմ դատարկող և 700մմ ոռոգման խողովակներից ե/բ պատյանով 85մ երկարությամբ,
3. ջրթողման փականային խուց՝ կահավորվելու է 2 հատ 700մմ սողնակներով, 2 հատ 300մմ սողնակներով և 1 հատ 700մմ ու 1 հատ 300մմ ուլտրաձայնային ջրաչափով,
4. ջրթողի ոռոգման ջրատար՝ $D=700$ մմ պողպատե թաղված խողովակաշար 500մ երկարությամբ,
5. դատարկման փականային խուց՝ կահավորվելու է 1 հատ 300մմ սողնակով,
6. մարիչ հոր՝ 6.4x5.5մ արտաքին չափերով ե/բ հոր, որը միացնելու է ոռոգման ջրթողի 700մմ տրամագծով խողովակաշարը $L\Gamma-80$ տիպի ե/բ հավաքովի վաքերով ոռոգման ջրանցքին:

Ջրընդունիչ ջրանցքը տեղակայված է Արթիկջուր գետի և ջրամբարի թասի միացման հանգույցում: Այն բաղկացած է հետևյալ մասերից՝

1. Ջրընդունիչ գլխամաս՝ ե/բ հոր, որի լայնությունը նեղանալու է 20.0մ-ից 10.0մ և 5.0մ երկարությամբ,
2. Ուղղանկյուն կտրվածքով $\Gamma-20$ տիպի ե/բ բլոկներով և 10.0մ լայնությամբ ե/բ հատակով ջրանցքից, որի երկարությունը 290.0մ:
3. ե/բ թեք հարթակ, որը բաղկացած է՝
 - ա. ջրընդունիչ ե/բ հորից 10.0մ լայնությամբ և 2.0մ երկարությամբ,
 - բ. ե/բ ուղանկյուն կտրվածքով թեք ջրանցքից 10.0մ լայնությամբ և 33.0մ երկարությամբ,
 - գ. մարիչ հորից 11.0x2.5մ արտաքին չափերով:



Հեղեղային ջրհեռը տեղակայված է պատվարի աջ կողմում: Այն բաղկացած է հետևյալ մասերից՝

1. ջրընդունիչ մաս, որը բաղկացած է լինելու ե/բ հորից 20.0մ լայնությամբ և 7.0մ երկարությամբ,
2. պատվարային հանգույց՝ 20.0մ լայնությամբ և 0.7-1.0մ բարձրությամբ ե/բ պատվարից,
3. ե/բ մարիչ հանգույց՝ ե/բ հորից 20.0մ լայնությամբ և 10.0մ երկարությամբ և նեղացող հատվածից 10.0մ լայնությամբ և 5.0մ երկարությամբ,
4. արագահոսային մաս՝ ե/բ մարիչ հանգույցից հետո 112.0մ երկարությամբ և 10.0մ լայնությամբ ուղղանկյուն կտրվածքով ջրանցք կահավործ Դ-20 տիպի ե/բ բլոկներով և ե/բ հատակով, որը միանալու է գոյություն ունեցող շինարարական ելքերի հեռացման ջրանցքի հետ:

Ջրամբարի թասից ֆիլտրացիայից խուսափելու համար նախատեսվում է՝ իրականացնել հակաֆիլտրացիոն միջոցառումներ և թասի 22.0 հա տարածքը ծածկել բենտոնատով:

Արթիկի ջրամբարի նախագծով նախատեսվող պատվարից մոտ 100մ հեռավորության վրա գոյություն ունեցող կառույցն օգտագործվել է որպես պահակային-շահագործման տնակ: Արթիկի ջրամբարի ծավալի ապահովման համար հարկավոր է Պեմզաշեն բնակավայրով անցնող երկու ձորակներով եկող ջրերը ուղղել դեպի ջրամբար:

Ընտրված դոտացիոն ջրանցքի առանցքը սկիզբ է առնելու Մարալիկ-Արթիկ ավտոճանապարհի տակով գոյություն ունեցող երկու անցքով թունելից՝ հետո N3 ուղղեհատվածքի վրա I գլխամասի կառուցումով: Նախատեսվող գլխամասից հետո Պեմզաշեն-Տուֆաշեն ավտոճանապարհին զուգահեռ ԼՌ-40 տիպի ե/բ հավաքովի վաքերով 950մ երկարությամբ ջրանցքով ջուրը կտեղափոխվի մինչև գոյություն ունեցող N2 ուղղեհատվածքի ձորակի վրա ինքնակամ ստեղծած հողային պատվարի ջրավազանի մեջ և կկառուցվի II գլխամասը: Գլխամասից սկիզբ կառնի դյուկեր D=500մմ պողպատե խողովակներով, որի երկարությունը կազմի 2300մ: Դյուկերի մեջ կուտակված երկու ձորակների ջուրը կանցկացվի Պեմզաշեն-Տուֆաշեն ավտոճանապարհին ուղղահայաց դեպի շահագործվող տուֆի քարանքի ճանապարհի տակով, գոյություն ունեցող թունելի հարևանությամբ, որից հետո կշարունակվի դոտացիոն ջրանցքը N2 ուղղեհատվածքի ձորակին զուգահեռ մինչև Տուֆաշեն բնակավայրը: Տուֆաշեն բնակավայրի և շահագործվող քարանքի տարածքների միջև կշարունակվի խողովակաշարը, որից հետո զուգահեռ կշարժվի գոյություն ունեցող գրունտային ճանապարհի (H-2 և Տուֆաշեն միացնող հին ճանապարհ) կողքով մինչև բացված խրամուղի, որը նախկինում նախատեսված էր մոտեցնող ջրանցքի անցկացման համար: Վերջին նշված կետից հետո դյուկերը լնցնելու է դաշտերի միջև բացված խրամուղիով, որտեղ կհատվի դաշտամիջյան ճանապարհի հետ: Հատման կետում դյուկերը կավարտվի և ջրանցքը կկահավորվի

ԼՌ-60 տիպի ե/բ հավաքովի բաքերով 2400մ և կմիանա Արթիկջուր գետին, որով էլ ջուրը կտեղափոխվի դեպի Արթիկի ջրամբար:

Առաջին գլխամասից մինչև Արթիկջուր գետը ջրանցքի երկարությունը կկազմի 5650մ: Արթիկջուր գետով ջուրը կտեղափոխվի մինչև ջրամբար մոտ 2400մ:

Ոռոգման ջրթողի փականային խուցից հետո նախատեսվում ԼՌ-80 տիպի ե/բ հավաքովի վաքերով ջրատար, որի երկարությունը կազմում է 460մ: Ջրանցքը անցնելու է լքված



իրականացման մեխանիզմներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազան արտանետումների՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործմամբ,
- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների կառավարման հետ:

Օդային ավազան արտանետումները կավելանան տեղանքի և ջրամբարի մաքրումից, հորատման տարածքների աշխատանքներից, պատվարի շինարարությունից և այլ հողային աշխատանքներից, շին.տեխնիկայի շարժից, ինչպես նաև մոտեցման ճանապարհներից:

Հատկապես, եթե անհրաժեշտություն առաջանա իրականացնել պայթեցման աշխատանքներ, որի ընթացքում կառաջանան NO₂, CO և NO արտանետումներ: Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել պայթեցման աշխատանքների համար հնարավոր այլընտրանքները: Փոշու արտանետումները փորման աշխատանքների ընթացքում պետք է վերահսկվեն փոշեկլանիչների միջոցով կամ թաց փոշեռսիչներով և ջրցանման գործողություններով:

Շինաշխատանքների մեկնարկից առաջ պատվարի տարածքում առկա թափոնները պետք է պատշաճ կերպով առանձնացվեն և հեռացվեն: Շինարարության ընթացքում առաջացող հիմնական թափոններն են՝ բանվորների կողմից առաջացող կենցաղային թափոնները շինհրապարակի և ջրամբարի տարածքի մաքրումից՝ բուսականության մնացորդներ, նյութերը, որոնք օգտագործվելու են պատվարի կառուցման համար:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Նախագծվող պատվարի մարմնի և հիմնատակի գրունտները և դրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները չեն փոխվելու, ինչպես նաև այն փաստը, որ պատվարի բարձրությունը նվազել է, հետևաբար փոքրանում են կատարի հատվածի սեյսմիկ արագացումները, կարելի է վստահ պնդել, որ ներկայիս տարբերակով պատվարի լայնական կտրվածքում պատկերված շեպերի թեքությունները բավարար են պատվարի ընդհանուր կայունության և անվտանգության պայմանները բավարարելու համար:

Եզրափակիչ մաս Հանրային լուծման ծանուցումը իրականացվել է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի: Հանրային բոլոր 4 լուծման իրականացվել են Արթիկ համայնքի Նոր Կյանք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, որտեղ ներկա են գտնվել ազդակիր բոլոր 5 բնակավայրերի ներկայացուցիչները: Հանրային լուծման նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական ամբոջ գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Շրջանի մարզպետարանը ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ատացված դիտողությունները և



առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Ծրագրի բնապահպանական և սոցիալական ազդեցությունները հաշվետվության մեջ գնահատվել և մշակվել են համապարփակ մեղմացման և փոխհատուցման միջոցառումներ: Բացի այդ, առաջարկվում են համայնքային զարգացմանն ուղղված միջոցառումներ՝ ստորին հոսքի գյուղերի կենսապայմանների մակարդակը բարձրացնելու նպատակով: Բնապահպանական և սոցիալական բոլոր բացասական ազդեցությունները լինելու են ցածր կամ միջին մակարդակի: Ծրագրի միջին մակարդակի ազդեցությունները վերաբերելու են հետևյալ ուղղություններին՝

- բուսական, կենդանական աշխարհ, կենսաբազմազանություն
- կենսամիջավայրերի կորուստ՝ բուսականության մաքրման և ջրամբարի ջրալցման հետևանքով:
- պատվարի շինարարության հետևանքով գետի աղտոտում:

Հիմք ընդունելով այս փաստը, ինչպես նաև այն, որ Արթիկջուր գետի ջրի որակը գնահատվում է որպես բավարար կամ վատ (հատկապես Արթիկ քաղաքին մոտ տարածքներում), կարելի է եզրակացնել, որ առաջարկվող ծրագիրը՝ կարող է իրականացվել առանց էական բացասական ազդեցություններ հասցնելու բնապահպանական և սոցիալական միջավայրին այն նախապայմանով, որ կիրականացվեն սահմանված մեղմացման և փոխհատուցման միջոցառումները:

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից տրված տեղեկատվության համաձայն՝ նախատեսվող Արթիկի ջրամբարին մոտեցող ջրագծի և մայր ջրանցքի հարևանությամբ առկա են հուշարձան և դամբարանադաշտ, որոնցից հեռավորությունները նախատեսվող գործունեության տարածքներից ապահովված է, ուստի անմիջական ազդեցություն չի լինելու համապատասխան մեղմացնող միջոցառումների իրականացման պայմաններում:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները զերծ պահել շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները,

- Պայթեցման աշխատանքների կատարման ժամանակ մարդկանց զգուշացնելու համար կիրառել հատուկ ձայնային ազդանշաններ: Արգելված գոտին պետք է լինի ամենամոտ լիցքից 20 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

- Ապահովել ջրամբարի տարածքում և ջրապահպանական գոտում շահագործման ջրապահպանական միջոցառումների իրականացումը՝ գործող սանիտարական նորմերի մակարդակով ջրամբարում ջրի որակի պահպանման, ջրային ողողումներից և աղտոտումից, հողերի պահպանմանը, ջրամբարի թասի տղմակալման և բուսածածկման, ծանծաղուտների «ծաղկման» և ափերի ողողման դեմ:

- Ջրապահպան գոտու սահմաններում արգելվում է՝ արդյունաբերական, գյուղատնտեսական և մյուս այն նոր ձեռնարկությունների և օբյեկտների շինարարությունն ու գործողների ընդլայնումը, որոնց գործունեությունը ուղղակի կամ անուղղակի ազդելու է ջրամբարի և դրան հարող հողերի սանիտարապատենիկական վիճակի վրա:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Շիրակի մարզի Արթիկ համայնքի Արթիկի ջրամբարի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան